ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԵՎ
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ
ԳՄԴ
Ա

Կազմողներ՝ ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՍԼԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՆՆԱ ՍՄԲԱՏՅԱՆ

Խմբագիր՝ ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ

Ա Աշխարհագրություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2012, 24 էջ:

ԳՄԴ

ISBN

ՆԱԽԱԲԱՆ

«Աշխարհագրություն» առարկայի ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական դպրոցների շրջանավարտներին և բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդներին՝ արդյունավետ նախապատրաստվելու պետական ավարտական և միասնական քննությանը, կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ: Ուղեցույցում ներառված նյութի թեմատիկ-բովանդակային պայմանները որպես ուղենիշ պիտի ծառայեն քննական առաջադրանքներ և թեստեր կազմողների համար: Ուղեցույցը ներառում է՝

- քննական թեստի հատկորոշիչը,
- պատասխանների լրացման ձևաթուղթը և դրա լրացման կարգը,
- քննական թեստի լրացման վերաբերյալ ցուցումներ և խորհուրդներ,
- քննական առաջադրանքների նմուշներ:

Հատկորոշիչում ներկայացված են քննական թեստի կառուցվածքը, բովանդակային սահմանները, ընդգրկվող առաջադրանքների համամասնական բաշխումն ըստ ներկայացման ձևի, բարդության աստիճանի և ստուգվող գործունեության տեսակների: Սահմանված են քննական թեստի առաջադրանքների կատարմանը հատկացվող ժամանակը և գնահատման չափանիշները:

Աշխարհագրության պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագրերը, «Ես և շրջակա աշխարհը»-4, «Բնագիտություն»-5 դասընթացների աշխարհագրական նյութը, դպրոցական դասագրքերը, ինչպես նաև «Աշխարհագրություն» 2013թ. պետական ավարտական և միասնական քննության առաջադրանքների շտեմարանը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հովսեփյան և ուրիշներ, «Ես և շրջակա աշխարհը»-4, Մանմար, 2011, 2012

2. Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, «Ես և շրջակա աշխարհը» -4, «Աստղիկ Գրատուն», 2011, 2012

3.Հ. Գաբրիելյան, Վ. Պողոսյան, «Աշխարհագրություն», դասագիրք 5-րդ դասարանի համար, Եր., 1996, 2000

4.Ա. Գրիգորյան, Վ. Պողոսյան և ուրիշներ, «Բնագիտություն 5», դասագիրք 5-րդ դասարանի համար, Եր., 2007

5.Գ. Պետրոսյան, Լ. Սահակյան և ուրիշներ , «Բնագիտություն 5», դասագիրք 5-րդ դասարանի համար, Եր., 2007

6.Մ. Իսկանդարյան և ուրիշներ, «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն», դասագիրք 6-րդ դասարանի համար, Եր., 1996, 2000, 2007

7. Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Մ. Մանասյան «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն», դասագիրք 6-րդ դասարանի համար, Եր., 2007

8. Գ. Ավագյան, Ռ. Մարգարյան, «Աշխարհագրություն», դասագիրք 7-րդ դասարանի համար, Եր.,1999

9. Լ. Վալեսյան և ուրիշներ, «Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ», դասագիրք 7-րդ դասարանի համար, Եր., 2007

10. Ռ. Մարգարյան, Ս. Օհանյան, «Աշխարհագրություն», դասագիրք 7-րդ դասարանի համար, Եր., 2007

11. Գ. Ավագյան, Ռ. Մարգարյան, «Աշխարհագրություն», դասագիրք 8-րդ դասարանի համար, Եր.,1999

12. Լ. Վալեսյան և ուրիշներ, «Հասարակական աշխարհագրություն: Տարածաշրջաններ և պետություններ», դասագիրք 8-րդ դասարանի համար, Եր., 2008

13. Ռ. Մարգարյան, Ս. Օհանյան, «Աշխարհագրություն», դասագիրք 8-րդ դասարանի համար, Եր., 2008

14. Լ. Վալեսյան և ուրիշներ, «Աշխարհագրություն: Հայաստան», դասագիրք 9-րդ դասարանի համար, Եր., 2009

15.Ա. Խոյեցյան, Գ. Մկրտչյան, «Հայաստանի աշխարհագրություն», դասագիրք 9-րդ դասարանի համար, Եր.,«Արևիկ» 2009

16.Մ. Մանասյան և ուրիշներ, «Աշխարհագրություն 10», «Զանգակ-97» Եր., 2010

17.Ա. Պոտոսյան և ուրիշներ, «Աշխարհագրություն 11», «Զանգակ-97» Եր., 2010

18. Մ. Մանասյան և ուրիշներ, «Աշխարհագրություն 12», «Զանգակ-97» Եր., 2011

19. «Աշխարհագրություն 99», բուհական ընդունելության քննության հարցարան, Եր., «Զանգակ-97», 1999

20. Մ. Մանասյան և ուրիշներ, «Աշխարհագրության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու», ուսումնաօժանդակ ձեռնարկ, Եր., 2007

ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ ՀԱՏԿՈՐՈՇԻՉԸ

1. Քննական թեստի կառուցվածքը

Քննական թեստը ներառում է 80 առաջադրանք և բաղկացած է երկու՝ Ա և Բ մակարդակներից: Ա մակարդակը պարունակում է 50 առաջադրանք (1-50-րդ), Բ մակարդակը՝ 30 առաջադրանք (51-80- րդ):

Ամփոփիչ ատեստավորման համար հանրակրթական դպրոցի շրջանավարտների պատրաստվածության մակարդակի ստուգումն իրականացվում է Ա մակարդակով, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար՝ Ա և Բ մակարդակներով:

Քննական թեստի յուրաքանչյուր առաջադրանք դասակարգվում է հետևյալ հատկանիշներով.

- ըստ դասընթացի բաժինների և թեմաների,
- ըստ ներկայացման ձևի,
- ըստ բարդության աստիճանի,
- ըստ ստուգվող գործունեության տեսակի:

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների և թեմաների

Թեստը պարունակում է աշխարհագրության դպրոցական ծրագրի բոլոր բաժինները հետևյալ **մոտավոր** համամասնություններով.

1. Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին - 9%
2. Աշխարհագրական թաղանթ - 17%
3. Մայրցամաքներ և օվկիանոսներ - 18%
4. Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ - 14%
5. Տարածաշրջաններ և երկրներ - 18%
6. Հայաստանի աշխարհագրություն - 17%
7. Բնություն-հասարակություն փոխհարաբերությունները, մարդկության համամոլորակային հիմնախնդիրները - 7%

Թեստի Ա մակարդակում տրված են աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտների (քարոլորտ, ջրոլորտ, մթնոլորտ,

կենսոլորտ) և մայրցամաքների, ինչպես նաև հասարակական աշխարհագրության հիմնական բաժինների (աշխարհի քաղաքական քարտեզ, աշխարհի բնակչություն, համաշխարհային տնտեսություն, պետություններ), Հայաստանի (Հայկական լեռնաշխարհ, Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն), բնություն-հասարակություն փոխհարաբերությունների, մարդկության համամոլորակային հիմնախնդիրների վերաբերյալ առաջադրանքներ:

Թեստի Բ մակարդակում նույնպես ներկայացված են «Աշխարհագրության» դպրոցական ծրագրի բոլոր 7 բաժինները և հիմնական թեմաները: Քննական թեստի Ա և Բ մակարդակներում, ըստ բաժինների և թեմաների առաջադրանքների քանակը որոշելիս, հաշվի է առնված դպրոցական ծրագրերով դրանց հատկացված ժամաքանակների համամասնությունը:

3. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի ***Ա մակարդակի*** բոլոր առաջադրանքները ընտրովի պատասխանով են: Առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանի 4 տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ: Որպես պատասխան՝ շրջանավարտը նշում է առաջարկվող 4 տարբերակից իր կարծիքով ***ճիշտ*** տարբերակի համարը:

Բ մակարդակի 30 առաջադրանքներից 25-ը՝ 51-75-րդ առաջադրանքները, ընտրովի պատասխանով են, իսկ 5-ը՝ 76-80-րդը՝ կարճ պատասխանով: Այս խնդիր-առաջադրանքների պատասխանները ոչ բացասական ամբողջ թվեր են: Դրանց պատասխանում պետք չէ նշել չափման միավորը:

4. Առաջադրանքների բաշխումն ըստ բարդության աստիճանի

Թեստը պարունակում է տարբեր բարդության առաջադրանքներ՝ հենքային, միջին բարդության և բարդ:

Ա մակարդակի առաջադրանքներով հիմնականում ստուգվում են շրջանավարտների գիտելիքները ***հենքային մակարդակով***՝ հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված պարտադիր նվազագույն պահանջներին համապատասխան: Այդ առաջադրանքների միջոցով ստուգվում է աշխարհագրական հիմնական փաստերի, աշխարհագրական հասկացությունների, տերմինների ու քարտեզների իմացությունը, աշխարհագրական խնդիր-առաջադրանքների լուծման համար ոչ բարդ գործողություններ կատարելու ունակությունը: Ա մակարդակում առաջադրանքների 70-75%-ը հենքային մակարդակի, իսկ մնացած 25-30%-ը՝ ***միջին բարդության առաջադրանքներ*** են*:* Դրանց միջոցով ստուգվում են ծանոթ իրավիճակներում գիտելիքների կիրառման շրջանավարտի կարողությունները և հմտությունները:

Բ մակարդակի առաջադրանքների մոտ 10-15%-ը հենքային մակարդակի են, 65-70%-ը՝ միջին բարդության, իսկ մոտ 20%-ը՝ բարդ հարցեր են: Միջին բարդության առաջադրանքների կատարման համար դիմորդից պահանջվում է համապատասխան գիտելիքներ աշխարհագրական հիմնական հասկացությունների ու տերմինների վերաբերյալ, նա պետք է կարողանա բացահայտել բնական և հասարակական տարբեր երևույթների և օբյեկտների տեղաբաշխման օրինաչափությունները, պատճառահետևանքային կապերը, կարողանա աշխարհագրական տարբեր օբյեկտների և երևույթների ոչ բարդ համադրումով կատարել առաջադրանքը: Միջին բարդության առաջադրանքների միջոցով ստուգվում է դիմորդի ծանոթ և փոքր-ինչ փոփոխված իրավիճակներում նույն կամ տարբեր թեմաներին վերաբերող աշխարհագրական տարբեր գիտելիքներ և հմտություններ կիրառելու կարողությունը:

Բ մակարդակի բարդ առաջադրանքներին պատասխանելու համար դիմորդը պետք է ունենա կայուն գիտելիքներ և փոփոխված կամ նոր իրավիճակներում դրանք կիրառելու հմտություններ,

այսինքն՝ այդ առաջադրանքների կատարման համար պահանջվում է աշխարհագրության տարբեր բաժիններից ու թեմաներից ավելի խորը գիտելիքներ, աշխարհագրական օրինաչափությունների և պատճառահետևանքային կապերի իմացություն, պատրաստվածության բարձր մակարդակ, տրամաբանական վերլուծություն և ստեղծագործական մոտեցում:

5. Առաջադրանքների բաշխումն ըստ ստուգվող գործունեության տեսակների

Թեստում աշխարհագրության ծրագրի թեմաներն ու բաժինները ներկայացված են տարբեր տիպի առաջադրանքներով, որոնցով ստուգվում են գործունեության տարբեր ձևեր, գիտելիքներ և կարողություններ:

Թեստով նախատեսվում է ստուգել գիտելիքները վերարտադրելու և տարբեր իրավիճակներում դրանք կիրառելու շրջանավարտի կարողությունների մակարդակն ըստ գործունեության տարբեր տեսակների:

Գիտելիքների վերարտադրումը ենթադրում է հիմնական աշխարհագրական փաստերի, հասկացությունների, երևույթների, գործընթացների, օրինաչափությունների պատճառահետևանքային կապերի իմացություն:

Գիտելիքների կիրառման կարողությունը ենթադրում է աշխարհագրական երևույթների և գործընթացների բացատրություն և վերլուծություն՝ ծանոթ, փոփոխված և նոր իրավիճակներում:

Թեստի բովանդակությունը պայմանավորված է շրջանավարտի և դիմորդի հետևյալ գիտելիքների և կարողությունների ստուգման անհրաժեշտությամբ.

կարողանալ՝

• քարտեզով և հատակագծով որոշել կետերի հեռավորությունը, ուղղությունը և բարձրությունը, աշխարհագրական օբյեկտների կոորդինատները և տեղադիրքը, կարևոր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրադարձությունների վայրերը,

• առանձնացնել և բնութագրել աշխարհագրական օբյեկտների և երևույթների առավել էական հատկանիշները,

• որակական և քանակական մակարդակով վերլուծել բնական և հասարակական երևույթները,

• տալ տարբեր մեծության տարածքների համալիր աշխարհագրական բնութագիրը,

• լուծել խնդիր-առաջադրանքներ բնական և հասարակական տարբեր երևույթների վերաբերյալ,

• կատարել հաշվարկներ՝ օգտվելով քարտեզների, աղյուսակների, սխեմաների, գրաֆիկների տվյալներից,

• հետևություններ անել՝ քարտեզների, գրաֆիկների, սխեմաների տեսքով ներկայացված աշխարհագրական տեղեկատվության տարբեր աղբյուրների վերաբերյալ,

• կատարել աշխարհագրական փոխկապակցված զույգերի համադրում և ընտրություն,

• ընտրել տարբեր հատկանիշներով բնութագրվող աշխարհագրական օբյեկտներն ու երևույթները,

իմանալ՝

• հիմնական աշխարհագրական հասկացություններն ու տերմինները, փաստերն ու երևույթները,

• աշխարհագրական ուսումնասիրության հիմնական մեթոդները,

• բնական և հասարակական աշխարհագրական երևույթների փոխադարձ կապերն ու տեղաբաշխման օրինաչափությունները,

• մայրցամաքներում, տարածաշրջաններում, պետություններում գտնվող աշխարհագրական տարբեր օբյեկտների տեղադիրքը քարտեզի վրա,

• Հայաստանի Հանրապետության, նրա առանձին մարզերի բնության, բնակչության և տնտեսության հիմնական գծերի և փոխադարձ կապերի մասին,

• բնօգտագործման, շրջակա միջավայրի աղտոտման և պահպանման մասին,

• մարդկության համամոլորակային հիմնախնդիրների մասին:

6. Աշխատանքի կատարմանը հատկացվող ժամանակը

Թեստի Ա և Բ մակարդակների առաջադրանքների կատարման համար հատկացվում է 180 րոպե:

7. Առանձին առաջադրանքների և ամբողջ աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխանով առաջադրանքը համարվում է կատարված, եթե դիմորդի ընտրած պատասխանի համարը համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

Կարճ պատասխանով առաջադրանքը համարվում է կատարված, եթե դիմորդի պատասխանը համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

Շրջանավարտի հավաքած միավորները սանդղակավորվում են:

8. Լրացուցիչ նյութեր և սարքեր

Քննության ընթացքում թույլատրվում է օգտագործել հաշվիչ:

9. Քննական թեստի ստուգման պայմանները

Համակարգչի միջոցով ստուգվում են միայն դիմորդների լրացրած պատասխանների ձևաթղթերը:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

2013 թ. Միասնական քննություն

Պատասխանների ձևաթուղթ

Աշխարհագրություն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

Ուշադիր

* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյուռեակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1 2 3 4 5 6 7 8 9 0

0 5

Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ

Դասախոսության համարը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1																				
2																				
3																				
4																				

Դասախոսության համարը	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
1																				
2																				
3																				
4																				

Դասախոսության համարը	41	42	43	44	45	46	47	48	49	50
1										
2										
3										
4										

Ա մակարդակում սխալ նշված պատասխանների փոխելու տեղը

1			
2			
3			
4			

Բ մակարդակ

Դասախոսության համարը	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70
1																				
2																				
3																				
4																				

Դասախոսության համարը	71	72	73	74	75
1					
2					
3					
4					

Ցուցանատախտակ

76	
77	
78	
79	
80	

Բ մակարդակում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

1		
2		
3		
4		

Ամբողջ ծնաթղթում փոխված պատասխանների քանակը

Պատգրե՛ք այս նախադասությունը՝

Ծանոթ եմ՝ քննության կարգին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար շրջանավարտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է նաև կախված շրջանավարտի քննական միավորը:

Թեստի Ա և Բ մակարդակների բոլոր (1-75) ընտրովի պատասխանով առաջադրանքները համարվում են կատարված, եթե դիմորդի ընտրած պատասխանի համարը համընկնում է ճիշտ պատասխանի համարի հետ: Այս առաջադրանքներին պատասխանելիս դիմորդը համապատասխան համարով առաջադրանքի ուղղահայաց սյունակի պատասխանների հնարավոր չորս տարբերակների վանդակներից մեկում պետք է դնի «X» նշանը (տե՛ս նկար 1):

նկ. 1

Բ մակարդակի կարճ պատասխանով առաջադրանքները (76-80-րդ) համարվում են կատարված, եթե դիմորդի ներկայացրած պատասխանը համընկնում է ճիշտ պատասխանի հետ: Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ յուրաքանչյուրի համար նախատեսված հորիզոնական հինգ վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջադրանքի պատասխան կարող է լինել 0-ից 99999-ը ոչ բացասական ամբողջ թվերից որևէ մեկը: Եթե պատասխանը միանիշ թիվ է, ապա այն պետք է լրացնել նշված հինգ վանդակներից

վերջինում՝ բաց թողնելով առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ վանդակները, երկնիշ պատասխանը լրացնել չորրորդ և հինգերորդ վանդակներում՝ բաց թողնելով առաջին երեք վանդակները, եռանիշ պատասխանը լրացնել երրորդ, չորրորդ և հինգերորդ վանդակներում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները, քառանիշ թիվը լրացնել՝ բաց թողնելով առաջին վանդակը, իսկ հնգանիշ թիվը լրացնել բոլոր հինգ վանդակներում (տե՛ս նկար 2):

նկ. 2

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 5 հնարավորություն, որից 3-ը՝ Ա մակարդակում, իսկ 2-ը՝ Բ-ում:

Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը ընտրովի պատասխանով առաջադրանքներում, ապա դաշտի վերևի հորիզոնական վանդակներում պետք է գրվի առաջադրանքի համարը, իսկ նրանից ներքև գտնվող սյունակի համապատասխան վանդակներից մեկում դրվի «X» նշանը (տե՛ս նկար 3, նկար 4):



նկ. 3



նկ. 4

Սխալ նշված պատասխանը կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում փոխելու դեպքում հորիզոնական առաջին երկու վանդակներում գրվում է առաջադրանքի համարը, որից հետո հաջորդ

հինգ վանդակներում լրացվում է պատասխանը՝ կարճ պատասխանի լրացման սկզբունքով (տե՛ս նկար 5):



նկ. 5

Ձևաթուղթը լրացվում է միայն սև գելային գրիչով:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Թեստի առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել ճիշտ պատասխանի ընտրությանը կամ խնդրի լուծմանը: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ապա ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ կամ ընտրովի պատասխաններով առաջադրանքներում նշել պատասխանի՝ ձեզ ավելի հավանական թվացող տարբերակը:

Հիշեք, որ ընտրովի պատասխաններով առաջադրանքների պատասխաններից միայն մեկն է ճիշտ:

Խելամիտ օգտագործեք ժամանակը: Նախ կատարեք այն առաջադրանքները, որոնց պատասխանները գիտեք: Այդպես դուք ավելորդ ժամանակ չեք վատնի, չեք կորցնի ժամանակի զգացողությունը և թեստի՝ ձեր իմացած մյուս հարցերին պատասխանելու հնարավորությունը: Երբ կավարտեք ձեր իմացած բոլոր հարցերին պատասխանելը, վերադարձեք բաց թողած առաջադրանքներին:

Թեստում 76-80-դը կարճ պատասխաններով խնդիր-առաջադրանքներ են, որոնց պատասխանները ոչ բացասական ամբողջ թվեր են: Պատասխանները պետք է լրացնել դրանց համար հատկացված տեղում՝ ըստ պահանջվող ձևի:

Խնդիր-առաջադրանքի պատասխանում պետք չէ նշել չափման միավորը:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:*** Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխաններն ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում:

Կրկին հիշեցնենք, որ նաև պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված ձեր քննական միավորը:

Թեստային առաջադրանքների նմուշներ

- **Նկարում ո՞ր տառով է նշված հարավային արևադարձը:**



1) Բ
2) Գ
3) Ա
4) Դ

- **Երկու քաղաքների միջև իրական հեռավորությունը 150 կմ է: Նրանց միջև եղած հեռավորությունը 1:1.000.000 մասշտաբի քարտեզի վրա կլինի՝**

1) 150 սմ
2) 15 սմ
3) 30 սմ
4) 45 սմ

- **Ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Աշխարհագրական լայնությունը երկրի մակերևույթի որևէ կետի հեռավորությունն է հասարակածից՝ արտահայտված աստիճաններով:
2) Խոշոր մասշտաբի քարտեզների խմբի մեջ մտնում են 1: 1000000-ից ավելի մեծ մասշտաբի քարտեզներ:

3) Տարբեր քարտեզներից կազմված գիրքը կոչվում է ուրվագծային քարտեզ:
4) Քարտեզի և գլոբուսի վրա հասարակածին զուգահեռ տարված երևակայական շրջագծերը կոչվում են միջօրեականներ:

- **Այն հարթավայրը, որը գտնվում է 0-200 մ բացարձակ բարձրության վրա, կոչվում է՝**

1) բարձրավայր
2) սարահարթ
3) ցածրավայր
4) դաշտավայր

- **Նկարում պատկերված է՝**

1) հորստ
2) գրաբեն
3) պլատֆորմ
4) գեոսինկլինալ



- **Փիղը և ընձուղտը ապրում են՝**

1) անապատների զոնայում
2) սավանաների զոնայում
3) տափաստանների զոնայում
4) լայնատերև անտառների զոնայում

- **Տրված «մայրցամաք-լեռնագագաթ» զույգերից ո՞րն է ճիշտ:**

  1) Աֆրիկա - Ջոմոլունգմա
  2) Եվրասիա - Ակոնկագուա
  3) Անտարկտիդա - Վինսոն
  4) Հարավային Ամերիկա - Մակ-Կինլի

- **Քարտեզի վրա Սիցիլիա կղզին ո՞ր տառով է նշված:**

  1) Ա
  2) Բ
  3) Գ
  4) Դ



- **Քարտեզի վրա Իսպանիա պետությունը ո՞ր տառով է նշված:**

1) Ե
2) Զ
3) Է
4) Ը

- **Ընտրեք բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդումը:**

1) տայգա - 400-600 մմ- մայրի, խեժափիճի
2) անապատներ – 300-400 մմ- օշինդր, կակտուս
3) տափաստան - 600-700 մմ- շյուղախոտ, սիզախոտ
4) տունդրա - 200 – 300 մմ- կաղնի, բոխի

- **Ընտրեք գետերի և ջրամբարների անվանումների համապատասխանության ճիշտ շարքը:**

1. Որոտան	ա. Կեչուտ
2. Արփա	բ. Ապարան
3. Քասախ	գ. Սպանդարյան
4. Ախուրյան	դ. Ախուրյան

1) 1 - ա, 2 - բ, 3 - գ, 4 - դ
2) 1 - գ, 2 - ա, 3 - դ, 4 -բ
3) 1 - գ, 2 - ա, 3 - բ, 4 - դ
4) 1- ա, 2 - դ, 3 - գ, 4 - բ

- **Ընտրեք նշված էլեկտրակայանների ճիշտ շարքը՝ ըստ նրանց հզորությունների նվազման:**

1) Հրազդանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Հայկական ԱԷԿ, Երևանի ՋԷԿ, Գյումուշի ՋՐԷԿ:
2) Հրազդանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ, Գյումուշի ՋՐԷԿ, Հայկական ԱԷԿ:

3) Հրազդանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ, Հայկական ԱԷԿ, Գյումուշի ՋրԷԿ:
4) Հայկական ԱԷԿ, Գյումուշի ՋրԷԿ, Հրազդանի ՊՇԷԿ (ՋԷԿ), Երևանի ՋԷԿ:

- **Ի՞նչն ընդհանուր չէ Գեղարքունիքի և Շիրակի մարզերի համար:**

1) Գերիշխում է լեռնատափաստանային լանդշաֆտը:
2) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
3) Զգալի տարածում ունեն ռելիեֆի հրաբխային ձևերը:
4) Հացահատիկի մշակությունը բուսաբուծության մասնագիտացման ճյուղ է:

- **Ո՞ր մշակաբույսի տարածման շրջաններն են պատկերված նկարում:**

1) արևածաղիկ
2) շաքարի ճակնդեղ
3) բամբակենի
4) ցորեն



- Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 35 ^{0}30′ և արմ. երկ. 80^{0} : Որոշեք Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ին:

(77-78-րդ առաջադրանքներ) Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2200 մ է, իսկ գետաբերանինը՝ 1000 մ: Նրա երկարությունը 80 կմ է:

- Որոշեք գետի անկումը:

- Որոշեք գետի թեքությունը:

(79-80-րդ առաջադրանքներ) Երկրի բնակչության թիվը 20 մլն է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 14 մլն, երկրի մակերեսը կազմում է 50 հազ. կմ^{2}:

- Որոշեք բնակչության միջին խտությունը:

- Որոշեք ուրբանիզացման մակարդակը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան..... ..3

Գրականություն..... 4

Քննական թեստի հատկորոշիչը……..... 6

Պատասխանների ձևաթղթի նմուշ 12

Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը..... 13

Խորհուրդներ և ցուցումներ..... 16

Առաջադրանքների նմուշներ 17

Գիրքը տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 0000 օրինակ, 24 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
Վաճառքի ենթակա չէ:
www.atc.am